



23 հունվարի 2015թ.

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2015 թվականի հունվարի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի պետ՝ Ա. Թովմասյանի, գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների.

Նախագահությամբ՝ Ս. Վարդանյանի

Քարտուղարությամբ՝ Մ. Մուրադյանի

Օրակարգում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի գյուղապետարանի 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն.

Զեկուցեց՝ Ս. Վարդանյան

Նա ներակայացրեց Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից 2014թ.-ի ընթացքում տարբեր ոլորտներում կատարած աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի տարեկան հաշվետվությունը համապատասխանում է կատարած աշխատանքին և գնահատվում է դրական:
2. Հաստատել Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար Ս. Վարդանյան



01.01.2014-31.12.2014թթ-ի ընթացքում Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից
կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ճշգրտվել է Հայթաղ համայնքի գույքահարկի բազայում առկա թերությունները:
2. Վերացվել է կադաստրային գծագրման ժամանակ աշխատանքային վրիպումները և անճշտությունները:
3. 2014թ-ի փետրվարի 16-ին Հայթաղ համայնքի գյուղատնտեսության խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության զարնանային աշխատանքների և ախտապատրաստական աշխատանքները:
4. Գյուղապետարանի աջակցությամբ 2014թ-ի մայիս ամսվա ընթացքում մաքրվել են փակ դրենաժային համակարգը 1000 և 450մ բաց դրենաժային համակարգը, որը չաշխատելու հետևանքով վնաս էր հասցնում ազգաբնակչությանը:
5. 01.01.2014թ-31.12.2014թթ դրությամբ համայնքի ազգաբնակչության կողմից ստացվել է 37 բողոքներ, որից բավարարվել է 31-ը: Բողոքները հիմնականում վերաբերվում են բնակչության սոցիալ-տնտեսական վիճակին, սեփականաշնորհված հողերի անբերրիությանը, հոսանքների և խմելու ջրի հետ կապված խնդիրներին:
6. Զինկոմիսարիատի հետ համատեղ կազմակերպվել է զարնանային զորակոչային աշխատանքները և ԴՕՕՍԱՖ-ում սովորող ուսանողների ճանապարհային ծախսերը հոգացել է գյուղապետարանը 12 ուսանողներ:
7. Հայթաղի ազգաբնակչությանը աջակցել ենք ձեռք բերելու 95տ ամոնյակային պարատանյութ (սիլիտրա) 6000դ. առժողությամբ ՀՀ կառավարության աջակցությամբ:
8. Մարտ, ապրիլ, մայիս ամսների ընթացքում գյուղապետարանի և ազգաբնակչության համատեղ ուժերով կատարվել է աղբահանություն համայնքի փողոցները մշակույթի տան հուշասյունների տարածքները, մանկապարտեզի տարածքը մաքրվել է խոտից: Համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցը մաքրվել է մոտ 9000մ:

9. 2014թ-ի ապրիլ ամսվա ընթացքում գյուղապետարանի օժանդակությամբ և համայնքի բնակիչների օժանդակությամբ՝ դպրոցի աջակցությամբ մաքրվել է դպրոցի տարածքը:
10. 2014թ-ի ապրիլ ամսին բարեկարգման աշխատանքներ են կատարվել հուշասյունների համալիրի տարածքում, տնկվել են ծաղիկներ և 50 սոճու տնկիներ:
11. Գյուղապետարանի օժանդակությամբ խրախուսվել են սպորտային միջոցառումները (կինգ-բոքսինգ, ծանրամարտ, Ֆուտբոլ): Պարգևատրվել են 1-3 տեղերը զբաղված մարզիկները:
12. Ապրիլի 5-ին գոհված ազատամարտիկ Հրայր Կարապետյանի մահվան 16-րդ տարելիցը նշվեց դպրոցի հետ համատեղ և ծաղիկներ դրվեցին հուշարձանին:
13. Մայիսի 9-ին նշվեց Հայրենական պատերազմի 63-րդ տարելիցը և գյուղապետարանի կողմից Հայրենական պատերազմի մասնակիցները պարգևատրվեցին:
14. Ազգաբնակչությանը գյուղապետարանը օգնել է ձեռք բերելու անհրաժեշտ բույսերի սերմացուներ, վարունգ, լոլիկ, ձմերուկ, սեխ, սոխ և այլն:
15. Ապրիլ ամսին ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտականությունները կատարելու համար:
16. Հունիսին ավարտվել է ցորենի բերքահավաքի հետ կապված աշխատանքները և 4 կոմբայնների հետ պայմանավորվածություն ձեռք բերվել ժամանակին բերքահավաքը կազմակերպվելու համար:
17. 2014թ-ին մայիս ամսին գյուղապետարանի կողմից կազմակերպվել են դասընթացներ աշխատակիցների և ազգաբնակչության համար գյուղատնտեսության վերաբերյալ, գյուղատնտեսության վարկավորման վերաբերյալ ծրագրեր մշակելու ուղղությամբ:
18. 2014թ-ի հունիս ամսին Հայթադի գյուղապետարանի կողմից լրացուցիչ մաքրվել են բոլոր ներտնտեսային առուների խցանված հատվածները: Մաքրվել և բարեկարգվել է դպրոցի, հայրենական և արցախյան գոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:

19. 2014թ-ի մայիս և հունիս ամսվա ընթացքում բարեկարգվել է 5 դաշտամիջյան ճանապարհ:
20. 2014թ-ի մարտ ամսվա ընթացքում գյուղապետարանի կողմից մաքրվել է դպրոցի և մանկապարտեզի տարածքը:
21. 01.01.2014-31.12.2014թթ ընթացքում Հայթաղի գյուղապետարանի կողմից դպրոցի աշակերտների և նախակրթարանի աշակերտներին տրամադրվել է 14 անվճար ավտոբուս՝ ք. Երևան, ք. Ծաղկաձոր, ք. Դիլիջան, ք. Վանաձոր, ք. Աղվերան, գ. Օշական, գ. Սարդարապատ այցելելու և մշակույթային միջոցառումներին մասնակցելու համար:
22. 2014թ-ի մարտ-ապրիլ ամիսներին տարվել են աշխատանքներ ազգաբնակչության հոսանքի անխափան աշխատանքները ապահովելու համար: Կտրվել են ճանապարհների հոսանքի լարերի խանգարող բոլոր ծառերի ճյուղերը կամ ծառերը:
23. 2014թ-ի ապրիլ ամսին գյուղապետարանի և ազգաբնակչության ուժերով մաքրվել է Սայաթ-Նովա փողոցում գործող կոյուղու 300մ հատվածը:
24. Գյուղապետարանի և խմելու ջրի Էջմիածնի գրասենյակի հետ համատեղ տարվել են աշխատանքներ գյուղը անխափան խմելու ջրով ապահովելու համար: Վերանորոգվել է Ծ. Բսակովի փողոցի խմելու ջրագծը 100մ և Պ.Սևակի փողոցի 150մ հատվածը:
25. 2014թ-ի փետրվար ամսին գյուղապետարանին էլեկտրոցանցի հետ համատեղ տարվել են աշխատանքներ համայնքի փողոցների լուսավորումները և մշակույթի տան շրջակայքի լուսավորումը կարգավորելու կապակցությամբ: Փոխվել և վերանորոգվել են 125 լուսային սարքեր:
26. Հայթաղ համայնքում մահացած 29 բնակիչների ընտանիքներին հատկացվել է ֆինանսական օգնություն:
27. 2014թ-ի ապրիլ, մայիս, հունիս ամիսների ընթացքում բարեկարգվել է Հայթաղ համայնքի Բաղրամյան փողոցը 200մ, Բակունցի 100մ , Ծ. Բսակովի 350մ:
28. Անցկացվել է համայնքի ավագանա 7 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին, բնակիչների սոցիալ տնտեսական իրավիճակին վերաբերվող հարցեր և որոշումներ փակցվել են գյուղապետարանի շենքում ցուցավահանակում՝ համայնքի բնակիչների համար տեսանելի տեղում:

29. Համայնքում սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ կատարվում է աղբահավաք:
30. 2014թ-ի հունիսի 1-ին կազմակերպվել է երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում և նախակրթարանի I-IV դասարանների երեխաներին տրամադրվել է ավտոբուսներ Օշական մեկնելու համար:
31. Հաշվետու ժամանակահատվածում գյուղապետարանի կողմից աջակցություն է ցուցաբերվել քաղաքապանության մարմիններին, ուղղված երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:
32. Հաշվետու ժամանակահատվածում պատշաճ կազմակերպվել է գերեզմանատների գոծունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:
33. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը:
34. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է հսկողություն առևտրի ոլորտի ծառայողների շրջանում:
35. Հունիսի 19-ին բուժաշխատողների օրվա առթիվ կազմակերպվել է հյուրասիրություն համայնքի բժշկական ամբուլատորիայում:
36. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն՝ հակահամաճարակային միջոցառումներ:
37. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 13 որոշում և արձակվել է 8 կարգադրություն՝ համայնքի բնակիչների հողամասերի գործառական նշանակությունը փոխելու, հասցեավորման, ինքնակամ կառուցված օժանդակ կառույցները օրինականացնելու և համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղացնելու հետ:
38. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ամենօրյա օգնությամբ, համագործակցությամբ իրականացվել են միջնակարգ դպրոցի, բուժ. ամբուլատորիայի արդյունավետ գործունեությունը:

39. Հաշվետու ժամանակահատվածում բնակիչների դիմումով կատարվել է 23 հողի չափազրում և սահմանների ճշտում, կատարվել են հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ:
40. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և անց է կացվել 6 հանդիպումներ ազգաբնակչության և վարկավորող կազմակերպությունների հետ:
41. 2014թ-ին գյուղապետարանի օժանդակությամբ վերանորոգվել են մշակույթի տան պառահանները 60քմ:
42. 2014թ-ին Հայթաղի գյուղապետարանի աջակցությամբ շարունակվել են կաբելային ինտերնետ ցանցի կառուցման աշխատանքները բնակիչների համար:
43. Օգոստոս 5-ից մինչև 25-ը գյուղապետարանի կողմից մաքրվել և բարեկարգվել է դպրոցի, Հայրենական և Արցախյան զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:
44. Օգոստոս ամսվա ընթացքում բարեկարգվել է 7 դաշտամիջյան ճանապարհներ:
45. Գյուղապետարանի աջակցությամբ նշվել է սեպտեմբերի 1-ի նվիրված միջոցառումներ, բոլոր առաջին դասարանցիները և բոլոր գերազանցիկները ստացել են հուշանվերներ:
46. Սեպտեմբեր ամսվա ընթացքում մաքրվել և բարեկարգվել է մարզադաշտի տարածքը և ձեռք են բերվել նոր սպորտային պարագաներ՝ ֆուտբոլի, վոլեյբոլի ձեռքի գնդակի նոր ցանցեր և գնդակներ: Ծանրամարտի և քինգբոքսինգի մարզիկները պարգևատրվել են հուշանվերներով:
47. Ձեռնարկվել են միջոցառումներ երեխաների համար երգի, պարի նոր խմբակ բացելու համար:
48. Սեպտեմբեր ամսվա ընթացքում գյուղապետարանի կողմից երկրորդ անգամ մաքրվել է համայնքի փակ դրենաժային համակարգը և բաց դրենաժային համակարգի խցանումները:
49. Զինկոմիսարիատի հետ համատեղ կազմակերպել է աշնանային զորակոչային աշխատանքները և ԴՕՍԱԱՖ-ում սովորող ուսանողների ճանապարհային ծախսը հոգացել է գյուղապետարանը (2 հոգի):

50. Սեպտեմբերի 5-ին գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպել է բնակիչների հետ նոր վարկավորման ծրագրեր, 56 բնակիչների և վարկային կազմակերպությունների հետ միասին:
51. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է Հայաստանի Հանրապետության անկախությանը նվիրված միջոցառում Սարդարապատում:
52. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է Արմավիրի մարզի բերքի տոն Արմավիր քաղաքում:
53. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է ուսուցիչների տոնը:
54. Սեպտեմբեր ամսին երկրորդ անգամ գյուղապետարանի աջակցությամբ մաքրվել է համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց 9000մ:
55. Սեպտեմբեր ամսին Հայթաղ համայնքի գյուղապետարանի խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության աշնանային աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:
56. Ազգաբնակչությանը գյուղապետարանը օգնել է ձեռք բերելու անհրաժեշտ բույսերի սերմացուներ:
57. Ազգաբնակչության 3 ֆերմերներին օժանդակել է երկարաժամկետ վարկավորման համար ջերմոցային տնտեսություններ ստեղծելու, մշակելու ծրագրեր:
58. Գյուղապետարանի և միջնակարգ դպրոցի հետ համատեղ իրականացվել է ծրագիր և նախակրթարանի բոլոր աշակերտների համար մշակույթային միջոցառումներ: Դեկտեմբերի 26-ին դպրոցի աշակերտների համար կազմակերպվել է ամանօրյա միջոցառում:
59. Նոյոմբեր-դեկտեմբերին ազգաբնակիչների հետ համատեղ ճշգրտվել են հողի հարկի, գույքահարկի հետ կապված ապառքների ցուցակները և ողջ ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտավորությունները կատարելու համար:

Հայթաղ համայնքի ղեկավար Մ. Վարդանյան



Հայթաղ համայնք
Բարձրացված խնդիրներ

23.01.2015թ.

Գ. Հայթաղ

1. Համայնքի ներտնտեսային հոսանքի զծերի անմխիթար վիճակը (քամիների ժամանակ գյուղը հոսանքագրվում է և հաճախակի բնակիչների տան սարքավորումները փչանում են՝ սառնարան, պոմպեր, հեռուստացույցներ, լվացքի մեքենաներ և այլն):
2. Գյուղատնտեսական վարկավորումների հետ կապված հարցեր:
3. Գյուղացիների բերքի իրացման հետ կապված հարցեր:
4. Թունաքիմիկատների հետ կապված հարցեր:
5. Բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի հետ կապված հարցեր:
6. Նոր զարգացող թաղամասի հոսանքի զծերի անմխիթար վիճակի հետ կապված հարցեր (խիստ անհրաժեշտություն կա նոր հոսանքի զծեր կառուցելու):
7. Համայնքի փողոցների մասնակի վերանորոգման հետ կապված հարցեր:
8. Համայնքի 2200մ երկարության հեղեղատարի մաքրման հարցը, որը վերջին անգամ ՀՀ Ջրային պետական կոմիտեի կողմից մաքրվել է 2006թ-ին: